

Տ. ԱՐՄԵՆ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԱՌ-ԱՎԻ ԿԻՐԱՎԻՒՆ (16 մարտի 2003 թ.)

«Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի հավաքացյալներ.

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մտել է Մեծի Պահոց շրջանը, և այս երրորդ շաբաթն է, որ փակ վարագույրով կատարում ենք մեր Սրբազան Պատարագները, և ամեն մեկ կիրակին նվիրված է Քրիստոսի առակներից մեկին և այս կիրակիներից յուրաքանչյուրին համապատասխան շարականների, աղոթքների կամ քարոզների միջոցով լուսաբանվում են Քրիստոսի առակների խոր իմաստը, և մեր հավաքացյալները դաստիարակվում են Ավետարանի այդ ոգով ու շնչով:

Այսօր Անառակ որդու առակի մասին է խոսքս, որ Քրիստոս ինքը իր աշակերտներին ներկայացրել է մի գողտրիկ առակ կամ պարամություն, որից ահա մոտ 2000 տարիներ շարունակ քրիստոնյա մեր ժողովուրդը դասեր է քաղում և այն նորովի է մեկնաբանվում ամեն անգամ: Եվ իսկապես Քրիստոսի բոլոր այս առակները որպես հավիտենական, մնայուն արժեքներ միշտ հնչել են մեր եկեղեցիներում և դաստիարակել մեր ժողովրդին:

Անառակ որդու մասին պարամությունը, վստահ եմ, բոլորդ գիտեք, թե ինչպես մի հարուստ մարդ ունենում է երկու զավակներ, և կրտսեր զավակը մի օր մրաժում է հեռանալ իր հայրենական տնից, վերցնել իրեն բաժին ընկած ժառանգությունը և գնալ մի հեռավոր երկիր, առանձին վայելել և ջնալ հայրենական ագարակում: Ահա այս պարամաով դիմում է հորը և վերցնում իրեն բաժին ընկած ժառանգությունը, վաճառում և գնում է հեռավոր մի երկիր և այնտեղ վաքնում հայրական ունեցվածքը՝ ապրելով անառակ կյանքով:

Շուրջով վաքնելով ինչ որ ուներ և ապրուստի որևէ միջոց չգտնելով՝ հարկադրված սկսում է խոզապահությամբ զբաղվել: Մի որոշ ժամանակ անց անդրադառնում է, թե ինչպես կարելի է այսպես շարունակել, երբ իր հոր տանը իր հոր ծառաները ավելի լավ են ապրում, քան ինքն այդտեղ: Զոջալով՝ որոշում է գնալ, իր հորը դիմել և նույնիսկ եթե հայրը նրան մի ծառայություն, մի աշխատանք տա, հոժարել ու աշխատել: Եվ այդպես նա վերադառնում է տուն, վերադառնում է և հեռվից տեսնում է հայրական կավածքները, այդ հրաշք գեղեցիկ ունեցվածքը: Եվ այդ պահին հայրը նկատում է, որ մի խեղճ ու կրակ աղքատ երիտասարդ կանգնած նայում է: Ամմիջապես ճանաչում է և ընդառաջ է գնում իր տղային, գրկախառնվում է: Իսկ տղան, անշուշտ, ինչպես նախապես մրաժել էր, գալիս է իր գոջումը հայտնելու՝ ասելով. «Մեղայ յերկինս եւ առաջի քո»:

Այդպես մեղա է գալիս իր հոր առջև, թե ինքը արժանի չէ իր հոր զավակը կոչվելու, բայց եկել է, որպեսզի նրանից խնդրի մի աշխատանք այնտեղ՝ իր գոյությունը պաշտպանելու համար: Հայրը որդուն գրկախառնված նրան բերում է տուն, ասում, որ «անհավասիկ իմ կորսված տղան գտնվեց, մեռած տղան հարություն առավ, և ես այսօր ուրախ եմ»:

Հրամայում է ծառաներին, որպեսզի նրա համար, նրա պարավի սեղաններ գցեն, հագուստները փոխեն, իշխանական մարանին դնեն ձեռքին: Այսպես ոգևորությամբ ընդունում է իր փղային և մեծ ուրախությամբ ծանուցում բոլորին, որ ինքն այսօր ամենաերջանիկ մարդն է: Սակայն այդ միջոցին մյուս փղան, որ երեկոյան վերադառնում է փուն, փեսնում է այդ ուրախությունը, իրենց փան մեջ եղած ցնծությունը և զարմանում է, թե ինչ է այս բոլորը:

Ծառաներն ասում են, թե եղբայրդ, որ փանից հեռացել էր, վերադարձել է և հայրդ ի պարիվ նրան այդպես հյուրընկալում է և ուրախանում: Ավագ որդին վրդովվում է և ասում. «Ես, որ այսքան փարիներ հորս հավաքարիմ եմ, ոչ մի այդպիսի ուրախության սեղան չի գցել, ուստի ես գործ չունեմ այս փան մեջ», և հեռանում է: Անշուշտ հայրը անմիջապես գալիս է և սկսում համոզել իր որդուն՝ ասելով, թե «դու անպայման ուրախ պետք է լինես ինձ նման, քանի որ մեր փղան, մեր փան անդամը հեռացել էր փնից, մեզ համար մեռած էր և այսօր գտնվել է, և դրա համար դու ինքդ էլ պիտի ուրախանաս»: Եվ այսպես Ավետարանի պարմությունը այստեղ վերջանում է, ի փարբերություն Քրիստոսի մյուս առակների, որոնցում Տերը մեկնում է իր խոսքը:

Հիսուս այստեղ շեշտը դնում է մարդու և Աստծո հարաբերության վրա, թե ինչպես մարդը միշտ մեղավոր է, սակայն Աստված այնպիսի պայմաններ է ստեղծում, որ նա մի օր զոջա իր կարարած սխալների համար և ապաշխարի, իսկ մյուս կողմից իբրև նրա անդրադարձ պարասխան Աստված սիրով սպասում է մեղավորներին և թողություն շնորհում նրանց: Սակայն նրանց, ովքեր ավագ որդու նման իրենց համարում են հավաքարիմ, թե միշտ կանգնել են իրենց հոր կողքին, մեղադրելի է այդ մտայնությունը: Այսինքն մեղավոր մարդը միշտ թեև ընկնում է մեծ մեղքերի մեջ ու հեռանում է Աստծուց, բայց ապաշխարությունը և զոջումը նրանց շար ավելի են մտրեցնում Աստծուն, և դարձնում է իսկապես արժանի մեղքերի թողության և Աստծո սիրուն: Մյուս կողմից՝ այն մարդիկ, ովքեր կարծում են, թե միշտ հավաքարիմ են եղել Աստծուն, ճիշտ չեն դրսևորում իրենց այսօրինակ փորձությունների ժամանակ:

Անշուշտ այս առակները, ինչպես ասացի, 2000 փարիներ շարունակ հնչել են քրիստոնեական եկեղեցիներում և բազմաթիվ քրիստոնյաներ դաստիարակվել են և եկել են ապաշխարության և սրացել են մեղքերի թողություն և արժանացել Աստծո սիրուն:

Այսօր, սակայն, մեր Եկեղեցու և ժողովրդի համար ինչպիսի դաստիարակչական նշանակություն ունի այս առակը: Այսօրվա կյանքի պայմանները այլ բան են մեզ ասում: Անշուշտ որ մեր ժողովրդի կյանքից, մեր ընտանիքներից, մեր հայրենիքից, մեր Եկեղեցուց բազմաթիվ մարդիկ հեռանալով մոլորվում են փարբեր աշխարհներում և սակայն քաջություն չեն ունենում անդրադառնալ և կրկին վերադառնալ իրենց հայրենի փունը, իսկ մնացածներից ոմանք էլ, ինչպես այն մեծ անդրանիկ փղան, այնքան էլ հաշտ ու խաղաղ ու սիրով չեն վերաբերվում իրենց հեռացած հարազատների հետ և նույնիսկ իրենք իրենց շրջապատում և այսօրվա մեր երկրի խառնաշփոթ վիճակը արդյունք է նման փրամադրությունների, որ մենք իսկապես հոգով ու մարմնով կարծես հեռացած ենք Աստծուց և չենք պահում Ավետարանի այն պարվիրանները, որոնք մեզ բերում են ապաշխարության, ազնվության և աստվածաճանաչողության:

Ահա այսօրվա առակը մեզ հիշեցնում է, որ մենք միշտ պարտաստ պետք է լինենք անդրադառնալու մեր կապարած մեղքերին, ապաշխարելու և վերադառնալու մեր հայրենի հարազատ փոխը լինի դա հայրենիք, լինի դա Եկեղեցի, որովհետև մենք իբրև փոքր ժողովուրդ մեր երջանկությունը կարող ենք գտնել միայն մեր հայրենի փոխ մեջ:

Ես, սիրելի հավաքացյալներ, աղոթում եմ, որ այսօր դուք այս փոքրիկ առակի օրինակով եթե հեռացել եք Աստուծոց, անդրադառնալով ձեր կյանքին և որևէ ժամանակ երբ ապաշխարեք, Աստված սիրով պիտի ընդունի ձեր աղոթքները, ձեր զոջումը և պիտի թողություն շնորհի, և դուք ավելի երջանիկ, ավելի խաղաղ սրտով պիտի շարունակեք ձեր կյանքը, մասնավորապես Մեծի պահոց այս շրջանին, երբ ամեն կիրակիի առակը մեզ դաստիարակում և մոլորեցնում է Հարության փոխին, մենք հոգով և սրտով և իմաստությամբ պետք է պարտաստ լինենք դիմավորելու Քրիստոսի Հարության հրաշափառ փոխը:

Ես աղոթում եմ, որ ձեր ընտանիքներում, ձեր շրջապատում լինի սեր, համերաշխություն ու խաղաղություն, որպեսզի քրիստոնեական մաքուր և ազնիվ հոգով դիմավորեք Քրիստոսի Հարությունը և արժանանաք Տիրոջ քավությանը և թողությանը:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն»: